**«Ավտոբուսներով օրենքով սահմանված կարգով ուղևորների կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից անսարք ավտոբուսների փոխարինման վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1215-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

____ ____________ 2019 թվականի N-Ն

**ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՍԱՐՔ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 1215-Ն ՈՐՈՇՈՒՄՆ**

**ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **19.7-րդ հոդվածի 13-րդ մասը**՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ավտոբուսներով օրենքով սահմանված կարգով ուղևորների կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից անսարք ավտոբուսների փոխարինման վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվու-

թյուն ներկայացնելու կարգը` համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավտոբուսներով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից անսարք ավտոբուսների փոխարինման վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 1215-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2019 թվականի

______________ ____ N ____-Ն որոշման

**ԿԱՐԳ**

**ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՍԱՐՔ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են օրենքով սահմանված կարգով ավտոբուսներով ուղևորների կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ` կանոնավոր փոխադրումներ իրականացնողներ) կողմից անսարք ավտոբուսների փոխարինման վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:
2. Անսարք ավտոբուսի փոխարեն նոր ավտոբուս շահագործելու համար կանոնավոր փոխադրումներ իրականացնողները մինչև նոր ավտոբուսի շահագործումը հարկային մարմին են ներկայացնում անսարք ավտոբուսը փոխարինելու վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ` տեղեկատվություն): Տեղեկատվությունը ներառվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան հարկային մարմին բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացվող` միջմարզային, ներմարզային և ներքաղաքային երթուղու շահագործման վերաբերյալ հայտարարությունում` որպես տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված հայտարարության փոփոխություն:
3. Հարկային մարմին ներկայացվող տեղեկատվությունում պարտադիր նշվում են`

1) կանոնավոր փոխադրումներ իրականացնողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը.

2) միջմարզային, ներմարզային և ներքաղաքային երթուղու շահագործման համար ստացված արտոնագրի ժամանակաշրջանը, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան հարկային մարմին է ներկայացվել միջմարզային, ներմարզային և ներքաղաքային երթուղու շահագործման վերաբերյալ հայտարարություն.

3) անսարք ավտոբուսի մակնիշը, հաշվառման համարանիշը կամ դեղին հիմնագույնի համարանիշը, նստատեղերի քանակը.

4) փոխարինող ավտոբուսի մակնիշը, հաշվառման համարանիշը կամ դեղին հիմնագույնի համարանիշը, նստատեղերի քանակը:

4. Կանոնավոր փոխադրումներ իրականացնողների կողմից սույն կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ներկայացնելուց հետո հարկային մարմինը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխան տրամադրում է փոփոխված արտոնագիր: Ընդ որում, տվյալ դեպքում արտոնագիր տրամադրելու համար փոխարինող ավտոբուսներով իրականացվող կանոնավոր փոխադրումների մասով պետական տուրք չի վճարվում: